«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողի մեջ ինքնուրույության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Տեխնոլոգիա

Հետազոտող ուսուցիչ՝ Բաբաջանյան Իրինա

Ուսումնական հաստատություն՝ 117 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն _____ 3
2. Գլուխ 1. «Ինքնուրույնություն» և «նախաձեռնողականություն» արտահայտությունների լուսաբանում_____ 4
3. ԳԼՈՒԽ 2. Ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում _____ 9
4. Գլուխ 3. Ձեռնարկատիրական գործունեության գաղափարներ մտածելու կարողությունների զարգացումը սովորողի մեջ «Տեխնոլոգիա» առարկայի շրջանակներում _____ 13
5. Եզրակացություն _____ 18
6. Օգտագործված գրականության ցանկ _____ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության **արդիականությունը**. դպրոցականների ուսուցման գործընթացում մեծ դեր ու նշանակություն ունի մանկավարժի կողմից սովորողի մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական մտածելակեպի խթանումն ու զարգացումը: Աշակերտների ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը կարևոր է ինչպես դպրոցում, այնպես էլ կյանքի բոլոր բնագավառներում: Ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Ինքնուրույն գործունեության **նպատակը** նոր սերնդին կյանքին, աշխատանքին նախապատրաստելն է: Նախաձեռնողականության զարգացումը նպատակ է հետապնդում օգնել սողորողին հասկանալու իր այս կամ այն գործունեության կարևորությունը, արդյունավետությունը, ճիշտ և հմուտ ձևակերպել այդ գործունեության դրդապատճառները:

Ստեղծագործական ունակությունների զարգացման նպատակն է, որ սովորողը գործի անորոշության պայմաններում, իմաստավորի և վերաիմաստավորի իր գործողությունները, ոչ կաղապարային լուծումներ որոնի՝ հաճախ կռահմամբ և կանխագուշակմամբ, հաղթահարի դժվարությունները՝ նույնիսկ հիասթափության և անելանելիության զգացման ի հայտ գալիս:

Հետազոտական աշխատանքի **խնդիրներից** են սովորողի մոտ ստեղծել այնպիսի իրավիճակ, երբ պարզ չեն լուծման որոնման ուղղությունը, որոնք կառուցված են այնպես, որ սովորողները պարզաբանեն խնդիրներն ու ինքնուրույն առաջարկեն դրանց լուծման ճանապարհներ, ինչպես նաև սովորողի մոտ ձևավորել բիզնես գաղափարներ մտածելու կարողություն:

Գլուխ 1. «Ինքնուրույնություն» և «նախաձեռնողականություն» արտահայտությունների լուսաբանում:

Դպրոցականների կրթության կազմակերպման ժամանակ ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը բավականին մեծ դեր ու նշանակություն ունեն:

Ինքնուրույնության խթանման գործում շատ մեծ է ինքնուրույն աշխատանքի դերը և դրա ճիշտ կազմակերպումը:

Ինքնուրույն է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց:

Ինքնուրույն աշխատանքի անցկացումն ունի որոշակի առանձնահատկություններ:

ՈՒսուցիչները հաճախ կիրառում են աշակերտների ակտիվությունը խթանող հնարներ, և համարում են, որ իրենք կազմակերպեցին ինքնուրույն աշխատանք: Անկասկած, այդ հնարների կիրառմամբ նրանք սովորեցնում են աշակերտներին ինքնուրույն աշխատել, բայց այն դեռ ինքնուրույնության ձևավորում չէ:

Ինքնուրույնությունը անհատի անձնային որակ է, իսկ ինքնուրույն աշխատանքը՝ ուսումնական աշխատանքի ձև:

Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝

որպես անհատական որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը:

Նույնիսկ բազմաթիվ փորձառու ուսուցիչներ կազմակերպելով սովորողների ուսումնական գործունեությունը՝ չեն խթանում նրանց ակտիվության զարգացմանը: Այդպիսի ուսուցիչներից աշակերտը կարող է օգնություն ստանալ առաջին իսկ դժվարության դեպքում: Այդպես աշակերտն այլևս առանձնապես ակտիվություն չի դրսևորում խնդիրների լուծման նպատակով ինքնուրույն ուղիների որոնման գործում: Աշակերտներին տրվում է պատրաստի արդյունքը, չնայած որ նա կարող է ինքնուրույն որոնել այն: Երբեմն էլ ուսուցիչը չի հետաքրքրվում, թե ինչպես է աշակերտը գրել հարցի պատասխանը, այլ սահմանափակվում է արդյունքների ճշտության ստուգումով, ինչը չի բարձրացնում աշակերտի հետաքրքրությունը՝ առաջադրանքի կատարման համար տարբեր ուղիների որոնման գործում:

Այսպիսի գործողությունները արգելակում են երեխաների զարգացումը, և սովորողները հայտնվում են անօգնական վիճակում՝ գրքի շուրջ իրականացվող ինքնուրույն աշխատանքի, առաջադրանքների ինքնուրույն լուծման, ստեղծագործական բնույթի աշխատանքների կատարման ընթացքում: Առաջադրանքների ծավալը նրա ուժերից վեր է դառնում, աշխատանքի տեմպը՝ դանդաղ:

Ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում իրենք իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը:

Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան:

Ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել

այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատատարելագործման համար:

Սովորողի մեջ ինքնուրույնության զարգացումը հնարավոր է իրականացնել սովորողների ինքնուրույն գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք: Այն իր մեջ ներառում է վեց հիմնական փուլեր.

1. Կազմակերպչական. Սա երեխաների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է:

2. Նախապատրաստական. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել, չխանգարել իր ընկերներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել և այն, այսինքն՝ այն ամենը, ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:

3. Կողմնորոշիչ. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բովանդակությունը: Նա ստանալով առաջադրանք՝ ընթերցում կամ վերընթերցում է պայմանը, դիտարկում է առարկան կամ գծագիրը, ընթերցում է տեքստը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողն իմաստավորում է առաջադրանքը, առանձնացնում է, թե ինչ է տրված, թե ինչ պետք է իմանալ կամ կատարել, ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջվում աշխատանքի կատարման համար: Բացի դրանից, այս փուլում,ուսուցիչը կարող է բաշխել աշխատանքի պլանը: Պլանը կարելի է գրառել նաև գրատախտակին: Գրատախտակին փակցվում է նաև թեմայի շուրջ մշակված պաստառները, սխեմաները և այլն: Այս փուլում ձևավորվում է ուսումնական աշխատանք ծավալելու կարևորագույն կարողություններից մեկը՝ աշխատանքի համար կարևոր նյութեր ընտրելու կարողությունը:

4. Հիմնական փուլ. Ալս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը:

5. Ամփոփիչ փուլ. այս փուլում կատարվում է անցուդարձ: Ուսուցիչը գնահատում է, քննարկում է, վերլուծում ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները:

Նպատակահարմար է առաջադրանքի կատարման ստուգման համար առանձնացնել ևս մեկ կառուցվածքային փուլ՝

6. Ստուգիչ փուլ, որի ընթացքում աշակերտը կատարելով առաջադրանքը՝ ինքն իր սեփական նախաձեռնությամբ ստուգում է իր աշխատանքը և գնահատում այն, այսինքն՝ իրականացնում է ինքնաստուգում և ինքնավերահսկում:

Սովորողի ինքնուրույնության զարգացումը, ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում են հատուկ մոտեցում:Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը դրական ազդեցություն կունենա սովորողի ինքնուրույնության ձևավորման գործում: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին:

Նախաձեռնողականությունը որևէ բան սկսելու՝ ձեռնարկելու ներքին դրդումն է: Այն նորարարությունների հանգեցնող մտքերի ակունքն է: Մի բան է տարաբնույթ մտքեր ունենալ, իսկ մեկ այլ բան՝ այդ հանճարեղ մտքերը զարգացնելն ու կյանքի կոչելը: Նախաձեռնողականությունն է այն շարժիչ ուժը, որն առաջ է մղում ամեն մի նոր միտք դեպի իրականություն: Այս կարողությունը հնարավոր է զարգացնել՝ աշակերտներին ներկայացնելով նորարարությունների կարևորությունը, առանձնացնելով իրենց մտքերը կյանքի կոչելու դրդապատճառները:

Դրդապատճառների ճիշտ և հմուտ ձևակերպումից է կախված՝ արդյոք կցանկանան սովորողները գործի դնել իրենց ունակությունները և հմտությունները իրենց նպատակների իրագործման ճանապարհին:

Նախաձեռնողականություն ցուցաբերելու դրդապատճառները կարող են պայմանավորված լինել այս կամ այն գիտության ոլորտի նկատմամբ հետաքրքրությամբ, ապագա մասնագիտությանը պատրաստվելու համար դպրոցական համապատասխան առարկան սովորելու և յուրացնելու անհրաժեշտության գիտակցությամբ:

Նախաձեռնողականություն ցուցաբերելու վրա ազդում են համադասարանցիների, ծնողների և ուսուցիչների կարծիքները: Պակաս կարևոր չէ նաև ինքնահաստատման դրդապատճառը:

Նախաձեռնողականության զարգացումը օգնում է սովորողին կողմնորոշվելու իրենց նպատակների հարցերում: Նրանք սկսում են սովորել և պլաններ գծել: Երեխան հասկանում է նոր գիտելիքներ և գործողության մեթոդներ ձեռք բերելու անհրաժեշտությունը:

ԳԼՈՒԽ 2. Ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

Ժամանակակից մանկավարժագիտության տեսանկյունից՝ ուսուցումը պետք է ուղղված լինի անհատի զարգացմանը, իսկ յուրաքանչյուր անհատ զարգանում է յուրովի: Ուստի չափազանց արդիական է ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպումը անձի առանձնահատկությունները հաշվի առնելով: Սովորողի անձի ձևավորման գործում ուսուցիչների աշխատանքի կարևորագույն ուղղություններից մեկը պետք է լինի ստեղծագործական ունակությունների զարգացումը: Յուրօրինակ լուծում առաջարկելու կարողությունը կախված է ոչ միայն գիտելիքներից, այլև մտածողության յուրահատկություններից, անձի մի շարք հատկություններից:

Ստեղծագործության բոլոր տեսակների համար ընդհանուր բաղադրիչների շարքը կարելի է դասել ստեղծագործաբար մտածելու, հիմնախնդրի բացահայտման և համագործակցելու ընդունակությունը:

Ստեղծագործական գործունեության ամենակարևոր բաղադրիչը ստեղծագործաբար մտածելու ընդունակությունն է: Ստեղծագործական մտածողությունը օժտված է երեք յուրահատուկ հատկանիշներով, որոնք ի հայտ են գալիս հիմնախնդիրները լուծելիս:

<u>Առաջինը</u> բարձր **ռեֆլեքսիան** է (հոգեանդրադարձը)՝ իմաստավորման և վերաիմաստավորման կարողությունը, որը կարող է ուղղված լինել իր գործողությունների բովանդակությանը, իրեն կամ իր ընկերներին, ինչպես նաև ամբողջությամբ վերցված խմբին ու միջխմբային փոխազդեցություններին: Հոգեբանները ռեֆլեքսիան դիտում են որպես ստեղծագործելու՝ յուրօրինակ լուծումների մշակումն ապահովող ամենակարևոր մեխանիզմ:

Որպես ստեղծագործական մտածողության *երկրորդ* յուրահատուկ գիծ կարելի է առանձնացնել **անորոշության պայմաններում լուծում փնտրելու ընդունակությունը**։ Այդպիսի ընդունակության ձևավորումը հատկապես կարևոր է այն սովորողների համար, ովքեր ուսման մեջ մեծ հաջողություններ ունեն, քանի որ նրանք ընտելանում են այն մտքին, որ ամեն ինչ սովորել ու հասկացել են։ Բացի այդ՝ ուսուցման գործընթացում, որպես կանոն, օգտագործվում են տիպային խնդիրներ, որոնք վերաբերում են որոշակի թեմայի։ Այսպիսի խնդիրներ լուծելով՝ աշակերտներն ընտելանում են նաև այն մտքին, որ խնդրի պայմանում դիտարկվում է լուծումը։ Սակայն եթե աշակերտը հայտնվում է այնպիսի իրավիճակում, երբ պարզ չեն ոչ լուծման որոնման ուղղությունը, ոչ լուծման անհրաժեշտ խորությունը, ոչ էլ իմացությունը, թե որ թեմայից կամ, նույնիսկ որ գիտության բնագավառից պետք է կիրառվեն գիտելիքները, ապա այդպիսի անորոշությունը հաճախ նրա մեջ երկյուղ է առաջացնում։ Նման աշակերտներն իրենց վստահ չեն զգում ու ներքին անհարմարավետության հետևանքով չեն կարողանում զբաղվել խնդրի լուծման որոնմամբ։

Ստեղծագործական մտածողության *երրորդ* կարևոր գիծն է **ինտելեկտուալ դժվարությունների հաղթահարման** ընդունակությունը։ Զարգացած հիշողությամբ և տրամաբանական մտածողությամբ օժտված սովորողներից շատերը հեշտությամբ լուծում են բարդ խնդիրներ։ Իսկ յուրօրինակ լուծումների որոնումն իրականացվում է բարդ տրամաբանական գործողությունների ընթացքում՝ ինտուիտիվ պատկերավոր կառուցումներով և սովորողներից մեծ ջանքեր է պահանջում։

Ստեղծագործական լուծումն ի հայտ է գալիս մի շարք անհաջող փորձերից հետո, երբ սովորողը կամ հրաժարվում է որոնումը շարունակելուց, կամ իր ուղեղում հանկարծակի ի հայտ է գալիս անհրաժեշտ գաղափարը։

Անհրաժեշտ է նշել, որ այն պայմանները, որոնցում ուսում են ստանում ուսումնական հաստատություններից շատերի սաները, չեն նպաստում նրանց մեջ

հիմնախնդիրը բացահայտելու ընդունակության ձևավորմանը: Դրան խոչընդոտում է խնդրի բովանդակությունը որքան հնարավոր է տրամաբանված հրամցնելու ուսուցչի ձգտումը: Այսինքն ուսուցիչը հարթեցնում է բոլոր հակասությունները այնպես, որ աշակերտին ամեն ինչ հասկանալի թվա: Առկա է մանկավարժական պարադոքս, որի էությունը կարելի է ձևակերպել այսպես. *«Եթե ուսուցիչը շատ լավ է բացատրում, ապա դա կարող է վատ անդրադառնալ աշակերտի զարգացմանը»*: Սովորողների մեջ ստեղծագործական գործունեությունը ձևավորելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել խնդրի բացահայտման ուսուցմանը: Նման ուսուցում իրականացվում է հատուկ խնդիրների օգնությամբ, որոնք կառուցված են այնպես, որ սովորողները պարզաբանեն խնդիրներն ու առաջարկեն դրանց լուծման ճանապարհներ:

Համագործակցելու ընդունակությունն անհատի ստեղծագործելու առումով կերևոր հատկանիշ է: Իր մտքերի ձևակերպման, ընկերոջ առաջարկության էության մեջ թափանցելու, իր և ուրիշի մտքերը հիմնավորված քննադատելու կարողությունն օգնում է խնդրի լուծման ուղու մշակմանը: Այս մտքերի փոխանակումն ու գնահատումը թույլ են տալիս ավելի լիարժեք պատկերացում կազմել խնդրի և դրա լուծման ուղղությունների վերաբերյալ:

Որպես ստեղծագործական գործունեության փորձի հաջորդ բաղադրիչ՝ կարելի է առանձնացնել դպրոցում ուսուցանվող առարկաների տարբեր բաժիններից ունեցած **գիտելիքների օգտագործման փորձը** հիմնախնդիրների լուծման համար: Առանց ճկուն ու իմաստավորված գիտելիքների հնարավոր չէ ստեղծագործել: Միևնույն ժամանակ՝ ստեղծագործությունը կարելի է դիտել որպես աշակերտների գիտելիքների ճկունության ու իմաստավորվածության բարձրացման միջոց:

Սովորողների ստեղծագործական մտածողության հաջող զարգացման կարևոր պայմանը մտածելու ընդհանուր կուլտուրայի առկայությունն է, այդ պատճառով ուսումնական գործունեությունը դասերին ուղղվում է, առաջին հերթին, սովորողի ինտելեկտուալ ունակությունների զարգացմանը. կարողանալ վերլուծել, սինթեզել,

գտնել պատճառահետևանքային կապերը, ընդհանրացնել, եզրահանգել, դասակարգել, համեմատել և այլն։ Բացի դրանից, ուսումնական ստեղծագործական գործունեությունում օգտագործվում են այնպիսի ինտելեկտուալ ընդունակություններ, ինչպիսիք են հետաքրքրասիրությունը՝ զգայունությունը շրջակա աշխարհի հիմնախնդիրների նկատմամբ, վարկած մշակելու ընդունակությունը, մտքի արագությունը և ճկունությունը՝ անցումը մի գաղափարից մյուսին, մտածելու յուրահատկությունը, ասոցացման հեշտությունը։ Սրանք ինտելեկտուալ ընդունակություններ են, որոնք որոշում են սովորողների **կրեատիվությունը**։

Ուսուցիչները այս ամենը պետք է կիրառեն ուսումնադաստիարակչական գործընթացում՝ զարգացող կրթական տեխնոլոգիաների միջոցով, այդ թվում նաև ուսուցմանը հետազոտական մոտեցմամբ։

Գլուխ 3. Ձեռնարկատիրական գործունեության գաղափարներ մտածելու կարողությունների զարգացումը սովորողի մեջ «Տեխնոլոգիա» առարկայի շրջանակներում

Քանի որ ձեռներեցությունը անձի՝ իր մտահղացումը կամ գաղափարը փող վաստակելու նպատակով գործողության և արդյունքի վերածելու ընդունակությունն է, հետևաբար այս երկու ոլորտները՝ ձեռնարկատիրական կրթությունը և տեխնոլոգիան, կնպաստեն, որ սովորողների մոտ զարգանան թե՛ բիզնես գաղափարներ մտածելու և թե՛ դրանք կյանքի կոչելու կարողությունները։

Ձեռնարկատիրական կրթության բաղադրիչը կնպաստի, որպեսզի սովորողները՝

- Մտածեն կաղապարներից դուրս,
- Մտածեն ստեղծագործաբար,
- Մտածեն նոր ձևով, լինեն նորարար,
- Դառնան ինքնավստահ,
- Կարողանան կայացնել որոշումներ,
- Ձեռք բերեն կամային բարձր հատկանիշներ՝ նախաձեռնողականություն, համարձակություն, խիզախություն, ինքնուրույնություն, վճռականություն և տոկունություն,
- Կարողանան ներգրավվել թիմային աշխատանքում,
- Կարողանան պլանավորել գործողությունները,
- Ձեռք բերեն առաջնորդական հատկանիշներ,
- Սովորեն փող աշխատել,
- Լինեն խելացի սպառողներ,
- Լինեն պարկեշտ և խելացի իրենց գործունեության մեջ և առհասարակ կյանքում։

Ձեռնարկատիրական կրթության բաղադրիչի ինտեգրումը 5-7-րդ դասարանի աշակերտներին թույլ է տալիս ընկալել ձեռնարկատիրական գործունեության գաղափար՝ բիզնես գաղափար, հասկացությունը: Ցանկալի է, որ ուսուցիչն աշակերտներին բացատրի, որ այդ երկու հասկացությունները նույն իմաստն ունեն, սակայն ավելի ճիշտ կլինի օգտագործել *ձեռնարակատիրական գործունեության գաղափար* բառակապակցությունը և աստիճանաբար վարժվեն այդ հասկացությանը:

Ուսուցիչը պետք է օգնի աշակերտներին, որպեսզի նրանք մտորեն հետևյալ հարցի շուրջ. եթե ունեք ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ լավ գաղափար և շահույթ վաստակելու նպատակով ցանկանում եք այն վերածել ապրանքի կամ ծառայության, ապա ի՞նչ պետք է անել, ի՞նչ անհրաժեշտ կլինի ձեզ դրա համար: Այլ կերպ ասած՝ դուք կծանոթանաք արտադրության գործոններին, դրանց տեսակներին, ինչպես նաև դրանց նշանակությանը և կարևորությանը բարիք ստեղծելիս:

Այս թեմայի ուսումնասիրությունը էապես կնպաստի սովորողների մոտ նախաձեռնողականության զարգացմանը, իրենց մտահղացումները կյանքի կոչելու հաստատակամությանը: Ձեռնարկատիրական գործունեության մանրամասն ուսումնասիրությունը սովորողի մոտ ձևավորում է բիզնես գաղափարներ մտածելու կարողություն:

Ուսուցիչը պետք է ընդհանուր տեղեկություններ հաղորդի ձեռներեցների համար անհրաժեշտ անձնային որակների համախմբի մասին, ներկայացնի, որ նոր և լավ գաղափարը կարող է մարդու համար եկամտի աղբյուր դառնալ: Սովորողներին պետք է մանրամասն ծանոթացնել աշխատատեղի կազմակերպման, անվտանգ աշխատանքի ու սանիտարահիգիենիկ կանոնների հետ:

Ցանկալի է նախ կազմակերպել քննարկում հետևյալ հարցերի շուրջ.

- Ինչպիսի՞ հատկանիշներ պետք է ունենան մարդիկ, որպեսզի ստեղծեն ձեռնարկատիրական գործունեության գաղափարներ:

- Ինչպե՞ս կարող է մարդու միտքն օգնել իրեն, որպեսզի նա գումար վաստակի։
- Կարո՞ղ են արդյոք աշակերտները ձեռնարկատիրական գործունեության գաղափարների օրինակներ բերել իրական կյանքից։

Անհրաժեշտ է խրախուսել աշակերտներին, որպեսզի նրանք մտածեն ազատ և անկաշկանդ, առաջարկեն և ներկայացնեն ցանկացած, նույնիսկ անիրական թվացող մտքեր և գաղափարներ։

Ուսուցիչն իր նախաձեռնությամբ կարող է աշակերտներին հանձնարարել և օգնել նրանց պատրաստելու ցանկացած առարկա կամ իր՝ լսելով աշակերտների ցանկությունները, հաշվի առնելով առաջարկություններն ու քննարկել։ Այնուհետև ուսուցիչը կարող է բացատրել աշակերտներին, որ այդ իրը շատ լավ նվեր է իրենց ընկերների, քույրիկների և եղբայրների համար, որ այլ նվեր գնելու փոխարեն նրանք կարող են սեփական ձեռքերով որևէ բան պատրաստել և նվիրել իրենց սիրելիներին։ Ուսուցիչը նրանց պետք է բացատրի, որ դրանով իրենք կարող են փող խնայել։

Առանձին թեմաների ուսումնասիրման ժամանակ ուսուցիչը պետք է ներկայացնի որևէ ապրանք արտադրելու համար անհրաժեշտ երեք արտադրության գործոնները՝ աշխատանքային ռեսուրսները, կապիտալ ռեսուրսները և բնական ռեսուրսները։

Աշխատանքը՝ որպես արտադրության գործոն կարելի է ինտեգրել «Կոնստրուկցիոն նյութերի մշակում» բաժնին։ Այս թեմայի ուսումնասիրման ժամանակ սովորողին պետք է ներկայացնել արտադրության յուրաքանչյուր գործոնի դերը և կարևորությունը բարիքի ստեղծման գործում։

Բնական ռեսուրսների և կապիտալ ռեսուրսների մանրամասն ուսումնասիրությունը կարելի է ինտեգրել «Նյութերի գեղարվեստական մշակում» բաժնում։ Սովորողներին պետք է բացատրել բնական ռեսուրսների դերն ու կարևորությունը մարդկանց և երկրի բարեկեցության գործում, բացատրել, թե ինչպես

խնայողաբար վերաբերվել բնական ռեսուրսներին, հոգատար վերաբերմունք ցույց տալ բնության նկատմամբ, բացատրել՝ ինչպես են բնական միջոցները դառնում ռեսուրս։

Ուսուցիչը պետք է սովորողներին ներկայացնի կապիտալի և կապիտալ ռեսուրսների դերը վերջնական արդյունք ստանալու ճանապարհին և բացատրի, թե որ դեպքում է փողը համարվում կապիտալ ռեսուրս։

Այնուհետև ուսուցիչը պետք է բացատրի, որ որպես չորրորդ գործոն հանդես է գալիս հենց ձեռնարկատերը, որը և միավորում է այս երեք գործոնները վերջնական արտադրանք ստանալու համար։ Աշակերտներին ոգևորելու և խրախուսելու համար ուսուցիչը պետք է սովորողներին բացատրի, որ ձեռնարկատերերը հենց իրենք են՝ աշակերտները, քանի որ հենց իրենք են մտահղացել, ձեռնարկել այդ գործը։

Կարելի է նաև «Փայտամշակման տեխնոլոգիա» և «Խոհարարություն» բաժիններում փայտից պատրաստված որևէ շինվածքի կամ էլ որևէ կերակրատեսակի օրինակով ամրապնդել գիտելիքները արտադրության գործոնների վերաբերյալ։

Թեմայի մանրամասն ուսումնասիրման արդյունքնում սովորողները պետք է ձեռք բերեն հետևյալ գիտելիքները՝

- Միտքը/մտահղացումը արժեք ունի, և դրա շնորհիվ մարդը կարող է փող վաստակել։
- Այն մտահղացումը, որի շնորհիվ մարդը կարող է փող վաստակել, կոչվում է ձեռնարակատիրական գործունեության գաղափար։
- Կարողանա սահմանել, թե ի՞նչ է ձեռնարակատիրական գործունեությունը։

Սովորողը պետք է կարողանա.

- Նկարագրել, թե ինչպես կարող է մարդը փող վաստակել իր մտքի կամ մտահղացման շնորհիվ։

- Նկարագրել ձեռնարկատիրոջը։
- Բերել ձեռնարկատիրական գործունեության գաղափարի օրինակներ իրական կյանքից։
- Պատկերացնել, թե ապագայում ինչպիսի ձեռնարկատիրական գործունեության գաղափար կցանկանար իրականացնել /առցանց առևտուր կազմակերպել կամ մանկական ժամանցի կենտրոն հիմնել և այլն/։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտության արդյունքում գալիս ենք հետևյալ եզրակացություններին՝

- Սովորողի ինքնուրույնությունն ու նախաձեռնողական հմտությունները չեն ծագում իրենք իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան:
- Ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատատարելագործման համար:
- Ստեղծագործական – հետազոտական աշխատանքները սովորողների ինքնուրույն գործունեության գագաթնակետն են հանդիսանում: Այդ աշխատանքները ամրապնդում են գիտելիքների ինքնուրույն որոնման հմտությունները և հնարավորություն են ընձեռնում աշակերտներին ձեռք բերել իրենց համար սկզբունքորեն նոր գիտելիքներ: Այս գործում մեծ նշանակություն ունեն դիտարկումները, փորձերը և գործնական աշխատանքները, որոնք նպաստում են աշակերտների դիտողականության, հետազոտական կարողությունների և հմտությունների զարգացմանը:
- Ձեռնարկատիրական կրթության բաղադրիչի ինտեգրումը թույլ է տալիս սովորողներին գիտակցել և կարևորել նոր միտք առաջարկելը, այդ գաղափարները եկամտի աղբյուր դարձնելը: Այսինքն, որպես վերջնարդյունք կարելի է նշել, որ սովորողը սկսում է հավատալ, որ ինքը նույնպես կարող է դառնալ նոր մտահղացման հեղինակ և դրա շնորհիվ գումար վաստակել:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ.
2. «Մանկավարժական միտք» հանդես 1-2, 2011թ.
3. https://znanio.ru
4. https://lib.armedu.am
5. Ա. Հովհաննիսյան, Ա. Մանուկյան, Կ.Պապիկյան «Տեխնոլոգիա առարկայում ինտեգրվող ձեռնարկատիրական կրթություն» ուսուցչի ձեռնարկ
6. https://multiurok.ru